


Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիւնիկ»
Ալեքսանդրիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

Պ. Ր. Ե.
ՏԱՐԵԿԱՆ... 45
Վ. Ե. ՏԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է

ԱՐՏԱՍԱՆՄԱՆ

Ձ. Ր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
Վ. Ե. ՏԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿՍԻ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 4

Փ Ի Ի Ն Ի Կ

Շ Ա Ր Ա Ր Ա Ր Ե Ր Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՍԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՐԻ

6 ՅՈՒԼԻՍ 1901

ԹԻԻ 5

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԼՍԱՐԱՆԸ

«Փիւնիկ»ի նախընթաց թիւին մէջ երկրորդ հրատարակութիւնը պատասխանելով երկուսու բազմութիւն մը Յունիս 30, կիրակի կէս օրէն ետքը ժամը 3 1/2 ին եկած խոնամ էր էճէն թատրոնը, ուր պիտի տրուէր խումբ մ'երիտասարդաց նախաձեռնութեամբ կազմակերպուած ժողովրդական լսարանը:

Հանդէսը բացառ տեղւոյս թաղ. Խորհուրդին քարտուղարը Պ. Լեւոն Մկրտչեան, որ Հնչ. Վեր. Կուսակցութեան Կեդրոնին իր անդամի հանդամանքովը, պարտք զգաց հոն հաւաքուող բազմութեան ներկայացնելու Պ. Զ. Գոչեանը, իբրև նոյն կուսակցութեան Եգիպտ. ընդհ. ներկայացուցիչ: Չ'մոռցաւ շնորհակալութիւն յայտնելու Սրբազան Առաջնորդին, որ հաճած էր նախազանչել հանդիսին, և նորին Սըրբ. Բ. Ե. ներկայացուցիչ մասնակցութեամբ:

նահայր քաջարի Բարթող. Վ. Թագաճեանի:

Օր. Մարի Պէյլէրեան, մեր գեղեցիկ սեռի նոր գրագէտներուն գրեթէ ամենէն համակրելին, որ ծանօթ է արդէն իր զգայնիկ բանաստեղծութիւններով, արձակ ու ոտանաւոր, առաջին անգամ ելաւ բեմ ու խօսեցաւ «Հայ կինը արդի ընկերութեան մէջ» շահեկան նիւթին վրայ: Սոյն բանախօսութիւնը կը հրատարակենք ստորև:

Օր. Մարի բանախօսութիւնն աւարտեց ծափերու որոտներու միջև: Օրիորդին յաջորդեց Պ. Զ. Գոչեան, նիւթ ունենալով «Հայր Անտիպիս մեջ ու ապագային»:

Նախ ուրուագծեց Հայուն ներկային առերևոյթ պատկերը. զրկանք, հաշտմանք, աւերում ու բնաջնջում. կարգ մը յուսուածներու և յաւակնուածներու քմահաճ դատաստանները, թիւք, պատմականօրէն խախուտ և ազդեցիկ հոշակեց: Սկսաւ ազդերու բնաջնջումէն, գեղերեցաւ — պէտք եղածէն աւելի երկար — Փիւնիկեցիներուն, Հոսովմայիցիներուն, Միջին Դարուն,

կղերականութեան, աւատականութեան ու վերածնունդին շուրջը, 16, 17 եւ 18^{րդ} դարերուն պայթած յեղափոխութիւնները ծնունդ հռչակելով Միջին Դարու յուր գրութեան: Անգլիական ու Փրանսական յեղափոխութիւններն բազմաթիւութեան գրաւ, շեշտեց առաջին տեղափակ ու կղզիացած, երկրորդին տիեզերական հանդամանքը, անոր բաշտականին, նայաւորութեանը քրիստոնէական վրայ քիչ մ'աւելի ծանրանալով. եզրակացուց թէ 1789ի յեղափոխութիւնը ճարակեցաւ առեւտուրէն առեւտուր, անցաւ թուրքիա, ցնցեց գերի ազգութիւնները, արթնցուց, վտարանջեցուց ու ազատագրեց Ի վերջոյ Հայկական յեղափոխութեան ծագումը նշանակեց 1860 թուականը. Սահմանագրութեան հիմնադիրները, Փրանսական 1848ի յեղափոխութեան ականատես ու մասնակցող այդ մեծ հանճարները յիշեց յանուանէ և իրենց գործը տարփողեց:


Երբ հասաւ ազգ. յեղափոխութեան ապստամբական փուլը մանեւր շրջանին, յանկարծ բռնկեցաւ Պ. բանասիրութեան ինքզինք գտաւ վերջապէս իր սեփական տարին մէջ, անկեղծ ու սլացող շեշտերով փառաբանեց յեղափոխութեան Ս. Հոգին. ժողովուրդին հողերանութիւնը պատմեց այդ աշող կամ ձախող շրջաններում: Զայտոյթով մը դատափետեյ զղուելի տարրերը, չեզոք անուան տակ Ս. Գործը խճրածողները, աշգին արիւնտ վէրքերուն վրայ կոկորդիլոսի արցունք թափողներն ու գեղ ու դարման չ'ցուցնողները:

Յեղափոխութիւնն անհրատեշտութիւն մ'է, կ'եղրակացնէ Պ. բանասիրը, և լաւատեսութեան երազանքի թեւերով յափշտակուած, պահ մը կրակ կը կտրի, կը մխայ, կը բոցանայ անկեղծ հաւատքով ու տաք շունչով մը կը կարգայ Անթիպար Զիբրիանի «Հայեր»ը, հրաւրելու, ազատաշունչ ու ելեկտրացուցիչ գրական կտոր մը նոր կեանքէն: Բանասիրութիւնը կը վերջանայ

բուն ծափահարութեանց միջև:


Սրբազան Առաջնորդը կը փակէ հանգէսը, աչերէն արցունք վազցնող այն յուրիչ բանասիրութիւնները դովելով, ու փափագելով որ միշտ կազմակերպուին այսպիսի լսարաններ, վառ պահելու համար աշգային զգացումները:

Թատրոնին դուռը գրումս զնազէն գոյացած հասոյթով պիտի վճարուի այն օրուան լսարանի ծառայող թատրոնին վարձքը: Հետեւաւոր զորս ժողովրդական նկատելու ենք զայն, և Պ. Լեւոն Միլտիչեանի ներկայացումը բոլորովին անտեղի ու անիմաստ, ինչ որ ա՛յնքան գեղեցիկ հանդիսի մը վրայ նսեմ քաղ մը ձգելու ծառայեց:



ՀԱՅ ԿԻՆԸ ԱՐԴԻ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Արասահման ելնելէս ի վեր, առաջին անգամն է որ հրապարակաւ խօսելու պատեհութիւնն կունենամ. ուստի և դիտաւորութիւնը չ'ունիմ այսօր, ընկերական, հասարակական կամ բարոյախօսական նիւթեր քը քըելու. ասոնք այնպիսի հարցեր են, արոնք առաւել կամ նուազ ամեն օր կը ծեծուին, ըլլա՛յ թերթերու մէջ, ըլլայ կտրող ատենաբաններու կողմէ զանազան բեմերու վրայ:

Ըլլալով կին, ես ինձ նիւթ ընարեր եմ կինը, անու ներկայ գրութիւնը, հանրութեան կարծիքը և վերաբերմունքը գէպ ի նա, անոր կատարած ու կատարելիք գերը ընտանեկան, ընկերական և ազգային կեանքի մէջ: Ասոնց վրայ սակայն, իրա՛ւ է թէ շատ անգամներ խօսեր, գրեր ու կրկնէր եմ. նորութիւններ մը չ'պիտի լսէք. բայց ճշմարտութիւնները ոչ չափ անգամներ ալ որ խօսուին, միշտ քիչ խօսուած են. . . . Պէտք է կրկնուին անսնք, մինչև ան պանկուսի օրը:

րում պիտի տանին փառաւոր յաղթա-
նակը վերջնականապէս:

Կը տեսնենք դժբաղդաբար թէ՛
կնոջ մասին բնաւ մտածող, խօսող ու
գործող չկայ, կամ եղածներն աւայն-
քա՞ն ցանցառ են որ արդէն մեծամաս-
նութեան անտարբերութեանը մէջ կը
խեղդուին: Մեր կանաչի տարաքնէ
ուրեմն ձայն բարձրացնել. զգայնել
մեր կարեւորութիւնը, հանրութեան
ուշադրութիւնը դարձնել մեր վրայ.
մեր իրաւունքն է ցոյց տալ վերջապէս
թէ՛ մենք ալ ազատ սրտի, ազատ
մտքի, ազա՞տ զգացման տէր էակներ
ենք, և բողոքել ուժգին հանդէպ այն
զրկանքներուն և անիրաւութեանց որ
դարերէ՛ ի վեր կաշկանդեր են մեր
մտքին ու սրտին ամենէն ազնիւ թախ-
ները: Մենք կը տեսնենք թէ՛ ամեն
դարերու և ամեն ժամանակներու մէջ
մի՛շտ ազատ, մի՛շտ ընդարձակ ասպա-
րէզ ունեցեր են այր մարդիկ. ասպա-
րէզ՝ խօսելու, խորհելու, գրելու և
գործելու. մինչդեռ կանանց համար
— մասնաւորապէս հայ կանանց համար
բսել կուզեմ — ստեղծուեր է շատ
սահմանափակ վիճակ մը, շատ կաշկան-
դուած կեանք մը:

Հայ կինը ազատ չէ՛ գրելու ան-
խրտիր ամեն նիւթերու վրայ. «ի՞նչ
պիտի բռնն» ի մտածումը շա՞տ անգամ-
ներ կը խեղդէ իր մտքին ու սրտին
խորերէն թռչող ամենէն վեհ ձայնը,
կը շլատէ իր հոգւոյն ամենէն բարձր
ձգտումները, և հեռաբար կը կաշ-
կանդէ իր գրիչն ալ. . . : Եթէ գրէ իսկ,
որոշ նիւթերու վրայ կը գրէ զորս
գրեթէ կը նշանակէ իրեն համար հան-
րային կարծիքը, և այդ պատճառաւ,
բռնադատուած, սեղմուած բան մը,
որոշ չափէն դուրս չենելու ջանք մը
կամ աւելի ճիշդը, վախ մը կայ առ հա-
սարակ իր բոլոր գրուածներուն մէջ:

Ազատ չէ՛ կարծիք յայտնելու հա-
մարձակ և անկեղծ այն ամեն հարցե-
րու մասին, որոց խառնուիլ անպատ-

րութեան մէջ՝ երբ խօսակցութիւնը կը
դառնայ ընկերային և հանրային խըն-
դիրներու առանցքին վրայ և կը ծեծուին
այնպիսի հարցեր՝ որոնք կենսական կը
նկատուին, զգուշաւոր ու երկչոտ կը
տեսնես զինքը միշտ. սակայն նա
կ'զգայ. համակ զգացում է ինքը ար-
դէն, Սէր եւ Գութ է միանգամայն.
անոր սիրտը վառուող կրակ մ'է, որ
կը տաքնան ու կը բռնկին ամենէն
նուիրական ու սուրբ զգացումները, սա-
կայն ատոնք իրենց մէջ կ'այրուին, մո-
խիր կը դառնան, որովհետեւ հայ կինը
ազատ չէ՛ ազատ հոսանք մը աւելով իր
զգացումներուն, վառել ու մաքրել
նաև սիրտերն անոնց՝ որոնք իրեն չուրջը
կը գտնուին, այդ բանը կ'արդիւլէ իրեն
հանրային կարծիքը. . . : Եւ ոչ միայն հայ
աղբին, ամեն աղբերու մէջ ալ առ հա-
սարակ կինը միւսնոյն տխուր ու կաշ-
կանդուած կեանքն ունի, հաղիւ ու-
րեմն իբրև բացառութիւն կրնանք յի-
շել մէկ քանի ցանցառ ազգեր՝ ուր
կինը քիչ թէ շատ կապրի իբրև ազատ
խղճի, ազատ համոզման, եւ ազատ
գաղափարի տէր էակ:

Շատ անգամ խորհեր եմ ինքնին
թէ՛ երբ մեր երկիրը դուրս եկեր է
վերջապէս անձանօթ խաւարներէ, թօ-
թափեր է իր դարաւոր քունը, և ծներ՝
մարդկութիւնը, ո՞վ արդեօք առաջին
անգամ յղացեր է գծել կնոջ համար
կեանքի այսքան նեղ սահման մը. նա
ինչո՞վ է պակաս «հօր» կոչուած սե-
ռէն. . . : Առարկուի գուցէ թէ նա պա-
կաս է խելքով, խորհելու և գործե-
լու կարողութիւններով, թէ զուրկ է
այն որոշ արամադրութիւններէն՝ որոնք
բացարձակ ազատութեան իրաւունքն
կուտան այր մարդուն. և սակայն ո՞ր
է ապացոյցը:

Միթէ օր մը ուզեցի՞ն քննել կնոջ
մտային ու բարոյական ընդունակու-
թիւններն: Շատ հեղինակներ կնոջ հե-
գեբանութիւնն ըրին, բայց խնդիր է
թէ յաջողեցա՞ն արդեօք, դարձան ու
գարձան անոր հոգւոյն ու սրտին չուր-

կամ աւելորդ համարեցին թափանցել: Մը արդեօք տրուեցաւ կնոջ այն պայմանները կամ այն տեղը՝ ուր նա կերկապարանոց ցոյց պիտի տար իր բոլոր կարողութիւններն եւ տրամադրութիւնները. ըլլա՛յ հանրային, ըլլա՛յ ընկերային, ըլլա՛յ նոյն իսկ ազգային խնդիրներու մէջ:

Կնոջ ըսին. «Ի՞նչ պիտի ծնուի, ամուսնանաս, քու կարգիդ ծնունդ պիտի տաս զաւակներու, ու պիտի մեռնիս խոտի պէս, բոյսի պէս աննշան եւ անչլուկ անցնելով աշխարհի վրայէն: Ուրիշ կոչում չունիս գուն. ընտանեկան յարկի մէջ է քեզի համար բացուած ասպարէզը, հոն ալ սակայն ազատ չես ուզածիդ պէս գործելու, հրամաններ պիտի ընդունիս եւ անոնց համեմատ չարժիս. գուն իրաւունք չունիս քեզի աւելի լաւ ու նպաստաւոր երեցած կերպովը գործելու»:

Ահա այսպէս որոշեցին, դատեցին ու վճռեցին: Տեսակ մը մեքենայ, տեսակ մը գործիք, տեսակ մը խաղալիք դարձուցին կինը, առանց նկատողութեան առնելու թէ նա եւս կը ձգտի գէպի աւելի լայն ու աւելի բարձր գործունէութիւն մը. իր խորհելու, զգալու, սիրելու, տառապելու, յուսալու բոլոր տրամադրութիւններովը, պիտի ըսեմ նաև բոլոր իրաւունքներովը...:

Անուրանալի է թէ՛ կինը ունի իր նկարագրին մէջ զոհուելու բնական ընդունակութիւն մը ու է նպատակի համար, միայն թէ այդ նպատակը կապ ունենայ աւելի՛ իր սրտին հետ: Նա պատրաստ է զոհուելու ի՛ր ծնողքին, ի՛ր ամուսնոյն, ի՛ր զաւակներուն համար, եւ այդ խիստ մօտիկ շրջանէն գուրս ալ — վկայ մեր յեղափոխական կեանքի պատմութիւնը —, գէպ ի Հայրենիքի ազատութեան Ս. Գործը, նա ցոյց տուաւ անհուն անձնութիւն վսեմ քաջասրտութիւն եւ հերոսական զոհողութիւններ...:

Եւ ոչ միայն վերջերս, ներկային,

նարկ մը նետել գէպ ի ետև, գէպ ի հետև աւելորդանցեալը, մտնել Հայաստան ճիշդ այն ժամանակներուն մէջ՝ յորս Վարդանանք իրենց դիւցապնի կուրծքերը թշնամոյն սուրին տուած առիւծի պէս կը կռուին. պիտի տեսնենք «փափկասուն Տիկնայք Հայոց աշխարհին» որ իշխանական փառքը, պերճանքն ու հանգիստն արհամարհելով կը թողուն որ սարգերը հանդարտօրէն ոստայններ կախեն իրենց շքեղ ապարանաց պատերէն վար, ազոտտեն պերճ սենեակներուն կահն ու կարասին. և իրենք զոր գետնին վրայ ծնրագիր՝ կաղօթեն առ Աստուած պատերազմին յաջողութեան համար:

Շարունակելի

Ս Է Ր Ը

Յրօնէս, Ֆրանսական Ֆեւրիէիցմին է՛ն փայլուն բերանը, իր վերջին թիւերէն մէկուն մէջ հարցուցած էր ընթերցողներուն կարծիքը նշանաւոր ռուս վիպասան Թոլսթոյի Աննա Գարեհիս վէպին անձերէն մէկուն բերնին մէջ դրած սա խօսքերուն մասին «Կիկե՛րուն անտեմի աշ Երիկ մարդերէ աւելի նիքարպաշ տե. մեմ սիրոյ վրայ վեմ ըրնունում մ՛ունիմք, իսկ անտեմ նիքիկ հեմ կապուած եմ...»:

Այս հարցման եղած բողբոջութիւ պատասխաններուն մէջէն, Փիլիսիպի ընթերցողներուն համար կը ներկայացնենք հետեւեալը, որ փառաբանութիւնն է կանացի սիրոյն:

«Այդ խօսքը բարաստիս մ՛է որ ո՛չ մէկ լուրջ խարսխի վրայ կը հանգչի: Մանկամարդ օրիորդն եթերային սէր միայն կ'երազէ, ոչինչ նիւթական զինք չ'զբաղեցնէր. իսկ երիտասարդը, արբունքի հասնելուն պէս, իր բնազդներէն կը մղուի գէպի ինչ որ նիւթական է: Այսպէս կը պահանջէ սակայն բնութիւնը, մշտնջենաւորելու համար տեսակը:

Յետոյ, յուսախար ու աւելի զգաս-

փափուկ հողի մ'ունի, էրիկ մարդը սիրոյ վրայ բարձր տեսութիւններ կ'արտայայտէ և սրովբէական ու աննիւթ միայուններ կ'երեւակայէ անխրական աշխարհներու մէջ: Կինը չ'կրնար իրեն հետեիլ այս հողին վրայ որուն կ'զգայ անհաստատ ըլլալը: Մարդը կը կարծէ այն ատեն որ իր միտքը, որուն թևեր տուաւ, զինք պիտի փոխադրէ լուսափաղի միջոցին մէջ դէպ 'ի գերբնական աշխարհ մը: Բայց իր մարմինը, ամենէն աղւոր վայրկեանին, զինքը կը դահավիժէ տղմուտ իրականութեան մէջ և այս իրականութիւնը դառն է:

Կինը, յարգելով բացառութիւնները, երբէք իր ստորին բնազդներուն անձնատուր չ'ըլլար. երբ կը սիրէ, անկեղծ է ու բացարձակ իր սիրոյն մէջ. զինքը կը նուիրէ ամբողջ, իր զգացումներուն մէջ յաճախ տիրական, միշտ զօրաւոր. այս վիճակին մէջ, երբեմն կրնայ հաւատալ իր կիրքերուն նիւթականութեանը, բայց ասիկայ պատրանք մ'է միայն:

Երբ կը սիրէ, ոչինչ նողկալի է իրեն համար. իր անձնուիրութիւնն անսահման է, և ուշախութեամբ է որ կը զրհէ ինչ որ ունի աւելի սիրական՝ անոր զոր ընտրեց իրեն համար:

Քիչ անդամ մարդ գեղեցիկ դերը կը խաղայ սիրոյ մէջ. ընդհանրապէս եռամոլ ու կեղտոտ անասուն մ'է»:

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

Գահիրէ 4 Յուլիս 1901

«Փիւնիկ»ի 3 թիւը իր անկողմնակալ ու հարազատօրէն հասարակական շահերը շօշափող լուրջ առաջնորդօղովը կուգար շեշտել այն ընդհանուր դժգոհութիւնն ու արտունջը որ հետզհետէ կը լայննայ ու կը տարածուի: Ու անշուշտ որքան ալ մեզ յուժտես ըրած ըլլայ մեր ժողովուրդը, իր շատ մը

րացուցիչ պատճառ մը չէ սակայն, որ մենք տեւականօրէն անհաշտ դրութեան մը մէջ ձգենք իր ձայնին գերակշռութիւնը, երբ հետզհետէ գիտակցօրէն թէ հետեւողօրէն կախի ճանչնալ ու հետամտել իր շահերուն ու իրաւունքներուն, և աչգար չ'պիտի ըլլար արհամարհել զինքը, երբ այսօր, այժմեութիւն ունեցող որ և է խնդրոյ մը շուրջը խլրտող ազգային պնակալէզներու ու սողացողներու կարգէն դուրս, բոլորովին անկախ ու բիրտ կերպով մը կուգայ իր բողոքիչ ու ողորբիչ ձայնը հանել, որ մեր սրտին կը դալչի բնականաբար: Ու մենք հեռու բոլոր այն փափկանկատ ու դժուժ հաշիւներէն ու վերապահումներէն զոր խոհեմութիւն կանուանեն շատեր, կուգանք պղտիկ մէկ արձագանքն ըլլալ իրաւունքի այդ խորխոռ ձայնին: Խղճի պարտք մըն է այս ալ:

Տխուր է ըսել թէ՛ այսօր մենք աչքի առջև ունինք կենսական կարգ մը առկախ խնդիրներ, սրտնք անմիջական ու անխուսափելի դործադրութեան մը կը կարօտին. մինչդեռ ազգային ձեռնհաս վարչութիւնը, իր տարտամ ու անհող գիրքովը՝ պարզապէս քթին խնդալ կուզէ ժողովուրդի մը որ ամեն ժամանակէ աւելի իրաւունք ունի խրտապահանջ գառնալու զինքը վարող իշխանութենէն ու առաջնորդէն:

Այն օրէն երբ Եգիպտոսի առաջնորդական խնդիրը յուզուիլ սկսաւ, լաւագոյն ընտրողութեան մը նպատակայարմար վիժումէն յետոյ, որ ժողովուրդին դնահատելու գիտակցութիւնը կուգար շեշտել, այդ թեկնածութեան իրաւունքը Գուրեան Եգիպտոսէն՝ կը փոխանցուէր Այվազեան Եգիպտոսին որ ոչ նուազ հաւատքով ու վստահութեամբ ակնկառոյց սպասցուց մեզ իր շնորհաբեր գալստեան:

Անցա՛ն օրեր, անցա՛ն ամիսներ, ու դեռ ժողովուրդը, ինչպէս «Փիւնիկ»ը՝ «իրմէ կսպասենք»ի իր ալ քիչ մը անիմաստ ու յուսահատական կոչովը՝

Թափել այն վարչական անկարողութիւնը զոր ցոյց տուաւ մեր Սրբազան Առաջնորդը, հակառակ մեր յոյսերուն ու իր խոստումներուն զոր կընէր իր մէկ քարոզին մէջ, Եգիպտոսի ազգ-վարչական դործերու անցեալին ու սուսմասիրորէն ծանօթութիւնն ալ կանխելով, որ վճռականութիւն մը կուտար իր սրտասնդող ու յուսադրելի խօսքերուն զորս աւելորդ չ'ըլլար կարծեմ համառօտել. «Ես եկած եմ ազգին ընտրողութեամբ և պատրիարքական կոնդակաւ մը ստանձնել Եգիպտոսի առաջնորդութեան ծանր և պատասխանատու պաշտօնը, վստահելով երկար տարիներու փորձառութեանս որով պիտի աշխատիմ արդարացին Զեր հաւատքն ու վստահութիւնը. ու անշուշտ երբ առաջնորդ մը որ կոչուած է տէր ու պաշտպան կանգնի իր հօտին չահերուն ու իրաւունքներուն՝ իրաւունք ունիք դուք ալ պահանջելու, սպասելու Զեր Առաջնորդէն որ դիտէ ճանչնալ իր պարտքերն ու կոչումը՝ առաջնորդողի, որով պիտի վարէ իր իրաւասութեան ենթարկուող բոլոր դործերը, առանց ո և է ազգեցութեան տակ ձգելու իր առաջնորդի իրաւունքը» — զոր ստուգաբանորէն բացատրելու միջոցին սուր ակնարկութիւններ ալ ըրաւ գէպի կամայակաւնութիւնները — ու գեւ կարգ մը ազւոր խօսքեր ու խոստումներ ալ որոնք կուգային վստահութիւն ներշնչել ժողովուրդին:

Շարունակելի

ՔՐՈՆԻԿ
ԱՐՏԱՔԻՆ

— Փոքր Ասիոյ ու Պաղեստինի գիծերը. — Փիւնիկի թիւերէն մէկուն մէջ Ռուսիան եւ Պաղտասի երկաթուղին տիպոսով առաջնորդողի մը մէջ ցոյց տուած է:

կողմէն Փոքր Ասիոյ մէջ մինչև Պաղտաս երկարող զծի մը շինութիւնը բուրսովին հակառակ էր Ռուսիոյ Արեւելեան քաղաքականութեան ծրագրին, իր ձգտած առարկայականներէն մին ըլլալով Պարսից Ծոցին մէջ իր գերակշռութեան հաստատումը, և թէ, աւելցուցած էինք, գերմանական Սէնտիքային այդ գծին արտօնութեան շնորհումը՝ իր հակահարուածը պիտի ունենար Բէթէրզպուրկի կառավարական շրջանակներուն մէջ: Ու ազգարևոսական կառավարութիւնն յաջողեցաւ Դրան հետ կնքել դադանի պայմանագրութիւն մը ուր թուրք կառավարութիւնն յանձնառու կ'ըլլայ ուսական ընկերութեանց վերապահել միմիայն, Փոքր Ասիոյ Արեւելեան հիւսիսային մասերուն մէջ երկաթուղիի արտօնութեան իրաւունքը:

Արդ, պատասխանելով այս առթիւ եղած հարցապնդումի մը Յունիս 18ին Լորտերու Խորհրդարանին մէջ, Լորտ Քրէնպօրն հետեւեալ յայտարարութիւնն ըրած է:

«Կը կարծուի որ նախնական համաձայնութիւն մը դոյացած է 1889ին Բ. Դրան ու Գերման Սէնտիքայի մը միջև այս արտօնութեան մասին: Զեկոյց չ'ստացանք թէ այդ արտօնութիւնը վերջնականապէս շնորհուած է կամ թէ մանրամասնութիւնները կարգադրուած են: Կ'ապահովեն թէ քիլոմէթրական երաշխաւորութիւն մ'այս արտօնութիւններէն մին պարտ էր ըլլալ, բայց չ'գիտցուիր թէ այս պայմանին յարաբերական բանակցութիւններն աւարտուու մօտ են»:

Նմանապէս պատասխանելով ռուս և թրքական վերոյիշեալ պայմանագրութեան մասին, ըսած է թէ՛ այդ կարգի պայմանագրութիւններ մտերմական են և թէ անգլիական կառավարութիւնը չ'ունի բաւականաչափ տեղեկութիւններ անոր վրայ, որպէս զի զանոնք հրապարակէ:

— Մակեդոնական Իւսկոպինն ալ...

վերջերս յայտարարած է հանրային բա-
նախօսութեան մը մէջ թէ Ռուսիոյ
աշակցութիւնը կորսուած է, որովհետեւ
Պուլկարիոյ մեծացումին բաղձանք-
ներն անոր մէջ կասկած արթնցուցած
են և թէ՛ Մակեդոնացիները, պարա-
զաներուն յարմարելու համար, պարտին
պուլկարական դատէն զատուիլ և ի-
րենց նշանաբան ունենալ. «Մակեդո-
նիան Մակեդոնացիներուն»:

Գարձեալ, Սօֆիայի գօթիթէին նախ-
կին նախագահը, համբաւաւոր Պորիս
Սարաֆօֆ, նոյն իմաստով յայտարար-
ութիւն մ'ըրած է թերթի մը մէջ,
ուր կը յաւելու թէ՛ ինք իսկ անկարե-
լին ըրած է Մակեդոնական դատն ան-
կախ ընելու համար Պուլկարիոյ ընդար-
ձակման ըղձանքներէն, որոնք անոր
դիրքը կը վտանգեն օտար պետու-
թեանց առջև:

Այս յեղափոխական յայտարարու-
թիւններէն անմիջապէս յետոյ կարժէր
հազարգել հետևեալ լուրերը:

Մեծ Իուրս Ալէքսանդր Միխայիլու-
վիչ Յուլիս ամուսն Սօֆիա կ'սպասուի:
Միլենոյն ատեն, Սև Մովու ռուսական
տորմիդր պիտի խորսիէ Պուրկազի նա-
ւահանգստէն մէջ, Պուլկար տորմիդին
? եղբայրակցելու համար:

Նմանապէս Պէլկրատէն կը ծանու-
ցուի թէ Տրակա թագուհւոյն Բէթերզ-
պուրկ ճամբորդութիւնը, որ բազմա-
թիւ անդամներ ծանուցուեցաւ ու հեր-
քուեցաւ, վերջնականապէս որոշուած
է, և Սնպտեմբեր ամսուն պիտի ըլ-
լայ: Բէթերզպուրկի սերպիական գե-
պանը պաշտօնական զեկոյց ստացած է
թէ Չարը մեծ հախարով պիտի ընդունի
սերպ վեհապետներուն այցելութիւնն:

— Սիօնական հարցն ու Յուհ. Գաւ-
ձը. Յայտնի է թէ հրէական հզօր ըն-
կերութիւն մը կայ Սիօնական տիպո-
սին տակ, որուն նպատակն է. 1. Պա-
զեստինը գնել Օսթ. կառավարութե-
նէն. 2. Հոն հիմնել կէս-ընկերվարա-
կան հանրապետութիւն մը Իսրայելի
թափառական ու հալածուած զաւակ-

է երկրագնտիս բոլոր մասերուն: մէջ,
միայն 'ի Ռուսիա 700 թուով մասնա-
ճիւղ հաշուելով:

Այս ընկերութիւնը որ իր կեդրոնն
ունի Չուիցերիոյ գերմանական մասին
մէջ, վերջերս հիմնեց Գաղթային Դրա-
մատուն մը և բաժիններ չըջարբու-
թեան հանեց: Իր հիմնադիրներուն մէջ
կը հաշուուին Սերպայի ամենէն նշա-
նաւոր Հրէաներէն, որոնց մէջ է նաև
Տօքթ. Հէրցլ, Հիմնադիր-Տնօրէն Նայի
Յրայի Բրէսէ Չայրունկ ազգեցիկ լրա-
գրին: Այս շարժումն 'ի սկզբան մեծ
համակրութիւն չ'գտաւ հրէայ դրամա-
տէր դասակարգին մէջ: Արդ, կը թուի
թէ այդ զգացումներ փոխուիլ սկսած
են և աի, անտարակոյս մեծ արդիւնք
մ'է 'ի նպատ Սիօնական հարցին: Ար-
դարև կ'իմանանք որ թուրք կառավա-
րութիւնը բանակցութեան մտած է Ռու-
չիլոի, Պէօյխուօտրի և ուրիշ հրէայ
գերման սեղանաւորներու հետ, 4 մի-
լիոն սկիի փոխառութիւն մը կնքելու
համար: Այս ծառայութեան փոխա-
րէն, պահանջած են դիւրութիւններ
տալ Պաղեստինի և մասնաւորապէս Սե-
րուսազէմի չըջանակներուն մէջ Ռու-
սիայէն, Աւստրիայէն ու Ռուսմանիայէն
հրէայ գաղթականներ հաստատելու
համար, որոնց գաղթականութիւնն 'ի
Սուրիա միշտ արդիւնուած է խտրու տա-
ճիկ կառավարութեան կողմէն: Տարա-
կուսելի է սակայն որ Սուլթանն ըն-
դունի այս պայմանը, հակառակ Գան-
ձին պարապին:

ՏԵՂԱԿԱՆ

Երիտաւարդ Թուրքիա. — Իոնալը
Հիւսի, նախկին Պեա Եգիպտոսի Երի-
տասարդ Թուրքերուն, երեք շաբաթէ
'ի վեր քաղաքս կը գտնուի: Դրամա-
կան անձուկ վիճակին հետեանքով
գարձի եկած էր, ինչպէս Մուրատ
Պէյը, և Մատրիտի Օսթ. Ինսպանատան
առաջին քարտուղաչն եղած էր 1500
ֆր. ամսաթոշակով զոր կանոնաւորա-

գայ մը, որ Թուրքիոյ ելմտական տա-
 րեզիրներուն մէջ տեսնուած ըլլայ —
 Բաւական գումար մը մէկդի դնելէ
 յետոյ որոշած է նորէն Երխասարգ-
 Թուրք ըլլալ և փախչիլ Գեսպանատու-
 նէն, որու վրայ 'ի բացակայութեան
 դատապարտուած է Պոլսոյ Ատեանէն:
 Սոյաւելով որ դրամը համարի մեղայի
 դալու համար կրկին, հիմայ Բարիզ
 գումարուելիք Գոնկրէին ծրագրի պատ-
 րաստութեամբը կ'ըբազի ուրիշ բարձ-
 րաստիճան անձնաւորութեանց հետ:
 Փիւնիկի խմբագիրներէն մին առիթ
 ունեցած է հետը տեսակցութիւն մ'ու-
 նենալու, որուն ընթացքին մէջ յայտա-
 րարած է թէ այս Գոնկրէն ոչ-պաշտո-
 նական հանգամանք մը պիտի ունենայ
 եւ թէ Մակեդոնական ու Հայկական
 Գոմիթէները պիտի կրնան զիրենք ներ-
 կայացնել հոն իբր քաղաքացիներ Օսմ.
 պետութեան եւ ոչ թէ իբր յեղափո-
 խական մարմիններ: Ասկից զատ, ամեն
 թրքահայատակ իրաւունք պիտի ունե-
 նայ վիճաբանութեանց մասնակցելու:
 Գալով Գոնկրէին գումարման, գեո-
 վերջնականապէս որոշուած չէ՝ թուա-
 կանը, օրակարգի նիւթերուն ու վիճա-
 բանութեանց ընդհանուր յայտարարին
 նախապատրաստական աշխատութիւն-
 ները գործնականի մէջ կարգ մը դըժ-
 ուարութեանց հանդիպելով:

ԱԶԴԵՐ

ՆՈՐ ՀՍՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մեհշիյէ Հայկ. Մեծ Սրճարանին ետին

Յաճախորդները պիտի գտնեն զով
 ու օգուէա տեղ մը, մաքուր սպասար-
 կութիւն, համեղ ու պէս պէս կերա-
 կուրներ, քաղցրաւենիք, միրգեր, ըմ-
 պելիք ևն. խիստ չափաւոր գիներով:

Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
 ուի կանխիկ վճարումով ու գոհացու-
 ցիչ պայմաններով:

Այցելեցէ՛ք մէկ անգամ՝ ու պիտի
 տեսնէք նոր ճաշարանին առաւելու-
 թիւնը:

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ

ՓՈՐԱԳՐԻՉ — ՏՊԱԳՐԻՉ

Կը պատրաստէ փութով ու ճա-
 շակով աճեն տեսակ կնիքներ, գառ-
 չուի ու պղինձի վրայ. քշաֆ, էսսան-
 վիյո, արծաթ ու սակի մօնօկրաւներ,
 հաշուեցուցակ, անդէդ, այցեքարտ,
 հասցեքարտ, ևն: Սակարկութեան հա-
 մար գիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Քաղաքիս երեւելի հայ տուներուն
 ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ
 գոհացուցիչ պայմաններով ամեն տե-
 սակ կահեղէններ, վարագոյր, ևն:
 Յանձնարարութիւնք խնամով կը
 կատարուին:

Գիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ա-
 մեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու
 պատրաստ, կը վաճառէ. աղբանք-
 ները մաքուր, տոկուն ու ձեւուր. կը
 մրցի բոլոր օտար վաճառատանց հետ,
 գիններուն աժանութեան կողմէն:

Փիւնիկի կը ծախուի.

— Աղեֆ սանդրիս. Շէրիֆ Բաշա փո-
 շոց, Անկլօ Էփիլտիէն Դրամատան քով,
 Տիար Բարսեղ Թէլլալեանի խանութը:

— Դահիրէ. Ապտիւլ Աղիւզ փոշոց,
 Տիար Կարապետ Երզնկացեանի խա-
 նութը: